# ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ
# ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ԵՐԿՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ADDRESSEE)**

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ __________

Ծանուցման ամսաթիվը՝ __________
Ստացողի անունը՝ __________
Ստացողի գործի համարը՝ __________
IHSS գրասենյակի հասցեն՝ __________

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ __________

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողին

Այս ծանուցմամբ տեղեկացնում ենք Ձեզ, որ մենք ուսումնասիրել ենք Խախտումը վիճարկելու իրավունքի ձևաթուղթը, որը Դուք ներկայացրել էիք __________ ամսին խախտում ստանալուց հետո: Այս ծանուցման ամսաթվի դրությամբ՝ խախտումը հաստատված է: Այս որոշման հիմքում ընկած է վիճարկման ձևում Ձեր կողմից տրամադրված տեղեկությունների և/կամ փաստաթղթերի ուսումնասիրությունը: Մենք պարզել ենք, որ չկան բավարար տեղեկություններ և/կամ փաստաթղթեր, որոնք ցույց կտան, որ Դուք համապատասխանել եք Ձեր աշխատանքային պայմանագրով թույլատրված աշխատանքային ժամերից ավելի ժամեր աշխատելու չափանիշներին: **Դուք կշարունակեք խախտում ունենալ հետևյալ պատճառ(ներ)ով՝**

- ☐ Աշխատել եք 40 ժամից ավել աշխատանքային շաբաթում ստացողի համար՝ առանց վարչաշրջանի հավանության, երբ այդ ստացողի առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ ավելի քիչ:

- ☐ Աշխատել եք ստացողի առավելագույն շաբաթական ժամերից ավել՝ առանց վարչաշրջանի հավանության, և դրա հետևանքով դուք ավելի շատ արտաժամյա աշխատանք եք կատարել ամսվա ընթացքում, քան սովորաբար կանեիք:

- ☐ Դուք աշխատում եք մի քանի ստացողների համար, ու աշխատում եք ավելի քան 66 ժամ մեկ աշխատանքային շաբաթում:

- ☐ Հայցել եք 7 ժամը գերազանցող ճամփորդության ժամանակ մեկ աշխատանքային շաբաթում:

Եթե սա Ձեր երկրորդ խախտումն է, Դուք կարող եք ուսումնասիրել աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվական նյութերն այս ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում: Եթե Դուք ուսումնասիրեք տեղեկատվական նյութերը և վերոհիշյալ հասցեով վարչաշրջանին վերադարձնեք վկայագրության ձևաթուղթն այս ծանուցման ամսաթվից 14 օրացուցային օրվա ընթացքում, Ձեր երկրորդ խախտումը կչեղարկվի, և Դուք կունենաք միայն մեկ խախտում: Խնդրում ենք հիշել, որ սա միակ հնարավորությունն է Ձեր երկրորդ խախտումը չեղարկելու համար, և այն ապագայում Ձեզ կրկին չի առաջարկվելու, անգամ եթե Դուք ստանաք ևս մեկ երկրորդ խախտում:

Եթե հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, ապա կարող եք դիմել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակ վերոնշյալ հեռախոսահամարով: